ԿԱՐԾԻՔ

Սարգիս Մաթևոսի Մկրտչյանի «Պանթուրքիզմը և Իրանը (պատմություն, գաղափարախոսություն, քաղաքականություն)» թեկնածուական ատենախոսության մասին

Ինչպես հայտնի է, պանթուրքիզմը որպես գաղափարական հիմք ծառայեցվեց հայերին և տեղաբնիկ այլ ժողովուրդների բնաջնջելու և հայրենազրկելու Օսմանյան կայսրության իշխանությունների հանցավոր քաղաքականության ընթացքում: Հայոց ցեղասպանության իրագործումից հետո էլ թուրքական իշխանություններն իրենց ներքին ու արտաքին քաղաքականությունը շարունակեցին իրականացնել այդ ազգայնամոլական գաղափարախոսության հիման վրա: Թեև XX դարի երկրորդ կեսին և XXI դարասկզբին որոշակի փոխակերպումներից հետո պանթուրքիզմ հանդես եկավ նոր դրսևորումներով, սակայն թյուրքալեզու ժողովուրդներին մեկ միասնական պետության մեջ միավորելու այդ գաղափարախոսության նպատակը մնաց անփոփոխ: Թուրք-ադրբեջանական ահաբեկչական տանդեմի կողմից սանձազերծված Արցախյան երրորդ 44-օրյա պատերազմի ընթացքը և դրա ծանր հետևանքները հերթական անգամ հայ ժողովրդին առերեսեցին պանթուրքիզմի իրական սպառնալիքների հետ:

Նախորդ դարի սկզբներին պանթուրքիզմի գաղափարախոսության իրագործման պրակտիկ քայլերից էր թուրքական իշխանությունների անմիջական ջանքերով կովկասյան թաթարների համար «Ադրբեջան» արհեստական պետական կազմավորման ստեղծումը: Իր գոյության առաջին իսկ օրից արհեստածին այդ պետությունը տարածքային հավակնություններ դրսևորեց ոչ միայն Հայաստանի Հանրապետության և իրանական Ատրպատական երկրամասի, այլև, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, նաև Իրանի հյուսիսային և հյուսիս-արևելյան նահանգներ նկատմամբ:

Հաշվի առնելով պանթուրքիստական նկրտումների շրջանակներում Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացվող այսպես կոչված «Զանգեզուրյան

միջանցքի» տրամադրման պահանջը, որը ենթադրաբար անցնելու է Իրանին սահմանակից Մեղրիի շրջանով, կարող ենք արձանագրել, որ Սարգիս Մկրտչյանի ատենախոսության թեման ոչ միայն արդիական է, այլև գիտաքաղաքական կարևոր նշանակություն ունի:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հապավումների ցուցակից և Իրանը թիրախ ընտրած պանթուրքիստական կազմակերպությունների անվանացանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են գիտական նորույթը, նպատակները և խնդիրները, ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները, կիրառված գիտական մեթոդաբանությունը, աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլխում ատենախոսն անդրադարձ է կատարում նախքան պանթուրքիզմի առաջացումը թյուրքական ցեղերի և պետական կազմավորումների կողմից Իրանի տարածքների և մշակույթի յուրացման գործընթացներին, պանթյուրքիզմի առաջացման սկզբնական փուլում Իրանի նկատմամբ քաղաքական հավակնություններին, XX դարի սկզբներին պանթուրքիզմի գաղափարախոսության Կովկաս և Իրան ներթափանցմանը, ինչպես նաև դրան Իրանի կողմից հակազդելու քայլերին:

Երկրորդ գլխում ատենախոսի կողմից քննարկվում են Իրանի Ատրպատական նահանգի թյուրքախոս բնակչության ինքնության հարցերը, պանթուրքիզմի և պանազերիզմի գաղափարական ընդհանրություններն ու տարբերությունները, 1991-2021 թթ. իրանա-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում Բաքվի կողմից Իրանի ազերիախոս շրջանների հարցի շահարկումները:

Երրորդ գլխում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Իրանի և հարևան թյուրքախոս պետություններում պանթուրքիստական կազմակերպությունների ձևավորումը, վեր է հանում դրանց հետապնդած նպատակները, համակողմանիորեն քննարկում դրանց ընդհատակյա ու բացահայտ գործունեության ձևերն ու եղանակները,

առանձին անդրադարձ է կատարվում Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում Իրանում գործող պանթուրքական կազմակերպությունների թշնամական քայլերին Հայաստանի, Արցախի և հայության նկատմամբ:

Եզրակացություններում ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները:

Հայաստանում պանթուրքիզմի մասին հրապարակված նախորդ ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվել են Օսմանյան կայսրության ու Թուրքիայի Հանրապետության, մասամբ նաև Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականության պատմությանը: Ս. Մկրտչյանն իր ատենախոսությամբ տվյալ գաղափարախոսության հակահիրանական ուղղվածությունը համակարգված ձևով, ըստ էության, առաջին անգամ է բերում հայկական ուսումնասիրության դաշտ:

Ատենախոսության արժանիքներից մեկն էլ այն է, որ թեմայի շրջանակներում հեղինակի կողմից հանգամանորեն քննության են առնվել Իրանի արտաքին գործերի նախարարությունում պահվող վավերագրերը, որոնք մեզանում առաջին անգամ են դրվում շրջանառության մեջ: Վերջին երկու տասնամյակներում տվյալ թեմայի շրջանակներում Իրանում հրատարակվել են բազմաթիվ գրքեր և գիտական հոդվածներ, որոնք հանգամանորեն վերլուծվել են ատենախոսի կողմից և զետեղվել աշխատությունում:

Օգտագործելով թեմային վերաբերող տարաբնույթ աղբյուրներն ու տարբեր հետազոտողների ուսումնասիրությունները, Ս. Մկրտչյանը ստեղծել է համապարփակ աշխատություն, և նրան հաջողվել է հաղթահարել թեկնածուական ատենախոսության շրջանակներում իր առջև դրված խնդիրները:

Այդուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև բացթողումներից ու թերություններից, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը.

1. Որոշ թերացումներ են նկատվում ատենախոսության կառուցվածքում: Այսպես, 2.1. ենթագլխի չափազանց փոքր ծավալներից (3,5 էջ) ելնելով, կարծում ենք, որ այն կարելի էր միացնել 1-ին գլխի վերջին ենթագլխին՝ որպես գլխի եզրափակում: Ի դեպ, նշված ենթագլխի բովանդակությունը ժամանակագրական առումով ներառում է միայն

սառը պատերազմից մինչև Իրանի Իսլամական հեղափոխությունն ընդգրկող ժամանակահատվածը, մինչդեռ ենթագլխի վերնագրի համաձայն այն պետք է հասցվեր մինչև ԽՍՀՄ փլուզումը: Նույն դիտարկումը կարելի է անել 5 էջ ծավալ ունեցող 3.1. ենթագլխի վերաբերյալ, որը կարելի էր չառանձնացնել, այլ որպես ներածություն կցել հաջորդ ենթագլխին: Նմանապես, փոքր ծավալ և բովանդակային ընդհանրություն ունեցող 3.5. և 3.6. ենթագլուխների միավորման միջոցով կարելի էր պակասեցնել 3-րդ գլխի ենթագլուխների թիվը:

2. Աշխատանքում նկատվում են ոչ ճիշտ ձևակերպումներ, որոնք, կարծում ենք, շտկման կարիք ունեն: Այսպես, ատենախոսության տարբեր էջերում (8, 105, 146, 147 և այլն) 2020 թ. 44-օրյա պատերազմը հեղինակն անվանում է «Արցախյան երկրորդ պատերազմ»: Այս ձևակերպումը ճիշտ չէ պատմական տեսակետից, իսկ քաղաքական ու քարոզչական առումներով այն չի բխում հայ ժողովրդի շահերից: Ռազմական գործողությունների կարճատևությունից անկախ, 2016 թ. ապրիլին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած երկրորդ լայնածավալ ագրեսիան ինչպես հակառակորդի, այնպես էլ հայկական կողմից ներգրավված մեծաթիվ մարդկային ուժերի, մեծաքանակ զինտեխնիկայի ու սպառազինության տեսակետից լիարժեք լայնամասշտաբ պատերազմ էր, որի ընթացքում հակառակորդը նպատակադրվել էր գրավել Արցախի Հանարապետության որոշ տարածքներ: Այն, որ 2016 թ. ապրիլյան 4-օրյա դաժան մարտական գործողությունների ընթացքում հարյուրավոր հայ զինվորների կյանքի գնով փաստացի խափանվեցին հակառակորդի հետապնդած նպատակները, որևէ կերպ չպետք է հանգեցնի նրան, որ նսեմացվի Արցախի Հանրապետության պետականության դեմ ադրբեջանական երկրորդ ագրեսիայի նպատակադրումը և թերագնահատվեն մեր զինվորների գործած սխրանքները: Այս հանգամանքներից ելնելով, կարծում ենք, որ 44-օրյա պատերազմը իրավամբ պետք է համարվի Արցախյան ոչ թե Երկրորդ, այլ Երրորդ պատերազմ: Պատմությանը հայտնի են պետությունների միջև կարճատև ռազմական գործողություններ, որոնք մասնագետների կողմից որակվել են որպես պատերազմներ՝ 1967 թ. արաբա-իսրայելյան 6-օրյա պատերազմ, 1971 թ. հնդկա-պակիստանական 13-

օրյա պատերազմ, 2008 թ. ռուս-վրացական 5-օրյա պատերազմ և այլն: Չմոռանանք նաև, որ Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնում հատուկ ստեղծվել էր «2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի հանգամանքների ուսումնասիրության քննիչ հանձնաժողով»:

3. Երբեմն որոշ կարևոր արձանագրումներ կատարելուց հետո ատենախոսը հարկ չի համարում դրանցից բխող պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնել: Այսպես, էջ 34-ում հեղինակը գրում է, որ Ռուսաստանի տարածքում պանթուրքիզմի գաղափարախոսության տարածումը առանձնակի դիմադրության չէր հանդիպում՝ առանց դրա պատճառների մասին իր տեսակետն արտահայտելու: Օրինակ, ռուս թուրքագետ և քաղաքական վերլուծաբան Ստանիսլավ Տարասովն այս կապակցությամբ ուշագրավ կարծիք է արտահայտել, նշելով որ իր կողմից ռուսական արխիվներում հայտնաբերվել են փաստաթղթեր, որոնց հիման վրա ինքը եզրակացնում է, որ պանթուրքիզմի որպես գաղափարախոսության ստեղծման և տարածման ծրագիրը մշակվել է Ցարական Ռուսաստանի Գլխավոր շտաբում՝ նպատակ հետապնդելով այդ կերպ վերահսկողության տակ պահել կայսրության թյուրքախոս բնակչությանը, ինչպես նաև իր ազդեցությունը տարածել Օսմանյան կայսրության վրա:

Նույն կերպ ատենախոսը էջ 55-ում հպանցիկ ձևով է անդրադարձել այն հարցին, որ Իրանը համաձայնվել է Թուրքիայի հետ տարածքային փոխանակման միջոցով պանթուրքիստներին ցամաքային ճանապարհ տալ դեպի Նախիջևան: Այս առումով չափազանց կարևոր էր անդրադառնալ հենց այդ ժամանակաշրջանում պանթուրքիստների դեմ պայքար մղող Իրանի իշխանությունների նման որոշում կայացնելու շարժառիթներին, քանզի այդ ամենը նաև Իրանի շահերի դեմ էր ուղղված:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի այսպես կոչված չեզոքությունը ատենախոսը փորձում է բացատրել ԽՍՀՄ-ի և Գերմանիայի դեսպանատների և նրանց կողմից ղեկավարվող հետախուզական ծառայությունների բուռն պայքարի հանգանաքով (էջ 60-61), ինչն ազդեց Գերմանայի կողմից պատերազմի մեջ չմտնելու Անկարայի որոշման վրա: Այս գործոնից բացի, կարծում ենք, որ ատենախոսը պետք է մատնանշեր

պատերազմի մեջ մտնել-չմտնելու կամ ռազմաքաղաքական դաշինքներից որևէ մեկին սատարել-չսատարելու Թուրքիայի իշխանությունների շարժառիթները՝ ելնելով իրենց երկրի պետական շահերից:

Առանց իր վերաբերմունքը դրսևորելու ատենախոսն մեջբերում է իրանցի փորձագետի կարծիքը, որի համաձայն, Բաքու – Թել Ավիվ – Անկարա եռանկյունին Ադրբեջանը ստեղծեց ընդդեմ Մոսկվա – Երևան – Թեհրան եռանկյունու (էջ 98): Պետք է նշել, որ երկու «եռանկյունիներում» նշված երկրների միջև իսկապես գոյություն ունի սերտ համագործակցություն՝ ի բացառություն թուրք-իսրայելական հարաբերությունների, սակայն դա դեռևս բավարար հիմք չի տալիս պնդելու, որ այդ երկկողմ հարաբերությունները կարող են վերաճել եռանկյունաձև փոքր դաշինքների: Ինչպես հայտնի է, հիշյալ պետությունների միջև գոյություն ունեն նաև հակասություններ ու շահերի բախումներ, որոնք լուրջ խոչընդոտ են այդ «եռանկյունիների» վերջնական ձևավորման ճանապարհին, ուստի, կարծում ենք, դեռևս վաղաժամ է խոսել դրանց ձևավորված լինելու մասին:

4. Ատենախոսության 2.3. ենթագլխում հեղինակը պանթուրքիզմին զուգահեռ անդրադարձ է կատարում պանազերիզմին: Կարծում ենք, այս համատեքստում հարկավոր էր անդրադառնալ այսպես կոչված «Մեծ Ադրբեջան» պանթուրքիստական ծրագրին, որի նպատակն էր ոչ միայն Իրանական Ատրպատականի, այլև Արևելյան Հայաստանի մի շարք տարածքների միավորումը Ադրբեջանին: Այս առումով աշխատանքն էականորեն կշահեր, եթե հեղինակն օգտվեր վերջերս հրատարակված Գ. Ստեփանյանի հոդվածից՝ Stepanyan G., The "Great Azerbaijan" Project in the Pan-Turkish Concept of the Mousavatists, Young Turks and Kemalists, «Բանբեր հայագիտության», 2022, N 1 (28), էջ 5-31:

Արված դիտողությունները բնավ չեն նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը: Սարգիս Մկրտչյանի «Պանթուրքիզմը և Իրանը (պատմություն, գաղափարախոսություն, քաղաքականություն)» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին

ու մասնագիտությանը, հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյան

Պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան

07.03.2023 թ.